600.0398.23.10.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2019 թվականի №398Ա

քաղ. Երևան

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽՈՐՈՇԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, որի համաձայն՝ ցանցի լիցենզիա ստացած անձի բաժնեմասի նկատմամբ իրավունքի օտարում կարող է իրականացվել միայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համաձայնությունը կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո,

բ) «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2019 թվականի սեպտեմբերի 18-ի №MH/L190701/1.0/RY գրությունը, որի համաձայն՝ նպատակահարմարությունից ելնելով՝ «ՄՏՍ» ՀԲԸ-ի կողմից որոշվել է, որ Մուսսա և Պիեր Ֆաթթուչներին պատկանող «ԱՐԱՄԱՅՈ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության բաժնետոմսերի 20 տոկոսի նկատմամբ գնման օպցիոնի իրավունքը կիրառվի «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից, որի 100 տոկոս բաժնետոմսը պատկանում է «ՄՏՍ» ՀԲԸ-ին: «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն է փոխանցվել նաև «ՄՏՍ» ՀԲԸ-ին պատկանող «ԱՐԱՄԱՅՈ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության բաժնետոմսերի 80 տոկոսը: Միաժամանակ Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ իր միակ բաժնետեր «ԱՐԱՄԱՅՈ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ԼԻՄԻԹԵԴ» ընկերության 100 տոկոս բաժնեմասը «ՄՏՍ» ՀԲԸ-ին 100 տոկոսով պատկանող և վերջինիս կողմից լիովին վերահսկվող ու կառավարվող «ԱԼԼԵԳՐԵՏՏՈ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օտարելուն (այսուհետ՝ Գործարք): Ընկերությունը հայցել է Հանձնաժողովի

ներողամտությունը Գործարքի իրականացման համար համաձայնություն ստանալու նպատակով նախապես չդիմելու համար՝ պատճառաբանելով, որ չի հանդիսացել դրա կողմ, չի ունեցել այդ գործընթացի վերահսկման հնարավորություն և այդ մասին տեղեկացվել է միայն կատարումից հետո,

գ) որ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 2019 թվականի սեպտեմբերի 23-ից վարչական վարույթ է հարուցել Ընկերության նկատմամբ՝ առանց Հանձնաժողովի համաձայնությունն ստանալու բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելու փաստն ուսումնասիրելու նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է 2019 թվականի սեպտեմբերի 23-ի №ՍՇ/34.2-Մ2-10/2612-19 գրությամբ,

դ) ի պատասխան Հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 23-ի №ՄՄ/34.2-Մ2-10/2613-19 գրության ներկայացված Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2019 թվականի հոկտեմբերի 17-ի №03/11.1/11116-2019 գրությունը, համաձայն որի՝ նախարարությունը չի առարկում Գործարքին,

ե) որ Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2019 թվականի սեպտեմբերի 30-ին Հանձնաժողով ուղարկված №MH/L190742/1.0/RY գրությամբ հայտնել է, որ ուսումնասիրվող հարցի կապակցությամբ լրացուցիչ հիմնավորումներ չունի,

զ) որ հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջները, ինչպես նաև այն, որ Գործարքի արդյունքում չի փոխվել Ընկերության փաստացի սեփականատերը և կարգավորվող անձի գործունեությունը կանխորոշելու հնարավորություն ունեցող անձը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժբ» ենթակետը, 54-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 63-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը խախտելու համար Ընկերությանը ենթարկել տույժի՝ երկու միլիոն (2 000 000) ՀՀ դրամ գումարի չափով:
2. Համաձայնություն տալ Գործարքին:
3. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում №900005242319 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետով սահմանված տույժը:

4. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու իր որոշումը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում դիմել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
23 հոկտեմբերի 2019թ.